ՀՀ Արարատի մարզի
Վեդի համայնքի ղեկավար
Պարոն Գ.Սարգսյանին
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության ղեկավար
Վ.Մանուկյանից

Հարգելի պարոն Սարգսյան.

Հաշվի առնելով 2024 թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցեց համայնքի ավագանու հերթական նիստի ընթացքում համայնքի ավագանու երկու խմբակցությունների համատեղ առաջարկությունը, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցությունը առաջարկում է Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի կամավոր խնդիրները սահմանելու և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 62 որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 4-րդ կետում նշված շահառուների ցանկում ընդգրկել հետևյալ կատեգորիայի անձանց՝

ա) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ՝ 100 000 ՀՀ դրամ,

բ) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պատերազմների 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի զինհաշմանդամներ՝ 100 000 ՀՀ դրամ,

գ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով գերեվարված, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված (կամ նրանց ընտանիքի անդամներին) անձինք՝ 100 000 ՀՀ դրամ:

Հարգանքով՝ Վ.Մանուկյան

04.02.2025թ.

ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 718
04. 02 2025